**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մարտի 2020 թվականի N 90

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 03.02.2020Թ-Ի ԹԻՎ 32 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Համայնքի ղեկավարի 03.02.2020թ.-ի «Հողատարածքին հասցե տրամադրելու մասին» թիվ 32 որոշման առաջին կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Գաբրիել Վազգենի Գաբրիելյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի վկայական թիվ 2153512/ համայնք Եղեգնաձոր ք., Վ. Գևորգյան փողոց տուն 2 հասցեում գտնվող բնակելի տանև տնամերձի հողատարածքից առանձնացվող 0,11960 հա մակերեսով հողատարածքին տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Եղեգնաձոր ք., Վ.Գևորգյան փողոց թիվ 2/5:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձին առձեռն հանձնելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2020թ. մարտի 16
ք.Եղեգնաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մարտի 2020 թվականի N 91

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերով, հիմք ընդունելով ավագանու 21.01.2020թ-ի թիվ 04-Ա, 13.03.2020թ.-ի թիվ 41-Ա որոշումները, 06.03.2020թ. համայնքապետարանում կայացած աճուրդի թիվ 1,2,3 արձանագրությունները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Համայնքային սեփականություն հանդիսացող համայնք Եղեգնաձոր ք., Մոմիկի փողոց 8/12 հասցեում գտնվող, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, 0,00477 հա մակերեսով հողատարածքը հատկացնել աճուրդում հաղթող ճանաչված Հայկ Հակոբի Մելքոնյանին՝ 117000 ՀՀ դրամ առավելագույն արժեքով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայկ Մելքոնյանին որոշման մասին իրազեկելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2020թ. մարտի 16
ք.Եղեգնաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մարտի 2020 թվականի N 92

## ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 13.03.2020թ.-ի թիվ 41-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման պահանջները և օրինական կառույցը գնելու վերաբերյալ Արմենակ Բագրատի Խաչատրյանի կողմից գնման համաձայնությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Համայնքի ղեկավարի կողմից օրինական ճանաչված համայնք Եղեգնաձոր ք., Երևանյան խճուղի 1/13/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 368,47 քմ մակերեսով հասարակական օբյեկտը և զբաղեցրած ու սպասարկման համար առանձնացված 0.0378 հա մակերեսով հողատարածքն ուղղակի վաճառքով վաճառել Արմենակ Բագրատի Խաչատրյանին շինության համար 4347099 ՀՀ դրամ և հողատարածքի համար 469476 ՀՀ դրամ արժեքով:

2. Քաղաքացու հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձին որոշման մասին իրազեկելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2020թ. մարտի 16
ք.Եղեգնաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մարտի 2020 թվականի N 93

## ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՏԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումը և հաշվի առնելով ավագանու 27.12.2019թ-ի թիվ 98-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Տիգրան Վանցետի Պողոյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2658546 վկայական) սպասարկման կետի՝ ք. Եղեգնաձոր, փ. Մյասնիկյան Ա-1 հասցեն փոփոխել և տրամադրել հետևյալ հասցեն՝ Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր ք., Մյասնիկյան փողոց թիվ 20/1:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձին որոշման մասին իրազեկելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2020թ. մարտի 16
ք.Եղեգնաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մարտի 2020 թվականի N 94

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ''Տեղական ինքնակառավարման մասին'' Հանրապետության Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 02.02.2002թ. N88 որոշմամբ հաստատված կարգի, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2011թ.-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի և Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջները և հաշվի առնելով Եղեգնաձորի համայնքապետարանի գլխավոր-մասնագետ գլխավոր-ճարտարապետ Ա. Աղաջանյանի 16.03.2020թ.-ի եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր ք., Մյասնիկյան փողոց թիվ 20/1 հասցեում գտնվող, Տիգրան Վացենտի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման թիվ 2658546 վկայական), ընդհանուր 111,10 քմ մակերեսով հասարակական սպասարկման կետի գործառնական նշանակությունը փոխել դարձնելով բնակելի տուն՝ առանց ճարտարապետա-հատակագծային առաջադրանքի ու շին. թույլտվության:

2. Թույլատրել փոփոխելու Տիգրան Վացենտի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող, համայնք Եղեգնաձոր ք., Մյասնիկյան փողոց թիվ 20/1 հասցեում գտնվող 0.00756 հա մակերեսով, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողատարածքի գործառնական նշանակությունը որպես բնակելի կառուցապատման:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում անձին որոշման մասին իրազեկելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2020թ. մարտի [illegible]
ք.Եղեգնաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մարտի 2020 թվականի N 95

## ԱՆՉԱՓԱՀԱՍ ԿԱՐԵՆ ՎԱՀԵԻ ՍԱՀՐԱԴՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 10.09.2015թ.-ի թիվ 1044 որոշմամբ սահմանված կանոնակարգը և ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գլխավոր քարտուղարի 13.03.2020թ.-ի թիվ 05/16.2/1632-20 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքի բնակիչ (հասցեն՝ համայնք Եղեգնաձոր ք., Միկոյան փողոց 12 շենք, բնակարան 1) անչափահաս Կարեն Վահեի Սահրադյանի (ծնված՝ 10.04.2004թ.) նկատմամբ հսկողություն սահմանելու համար 1 տարի ժամկետով հասարակական դաստիարակ նշանակել Եղեգնաձորի համայնքապետարանի գլխավոր մասնագետ սոցիալական աշխատող Անի Առաքելյանին:

2. Հանձնարարել իրականացնել մշտադիտարկում և կազմել համապատասխան արձանագրություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2020թ. մարտի 16
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

20 մարտի 2020 թվականի N 96

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ / ԾԱԾԿԱԳԻՐ 3.1-4/ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին » N 13-Ն հրամանով հաստատված կարգի 11-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-4/ համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացնել մրցույթ՝ 2020թ ապրիլի 22-ին ժամը 12:00-ին:

2.Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-4/ համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար 2020 թ-ի ապրիլի 22– ին կայանալիք մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

3.Հանձնարարել աշխատակազմի քարտուղարին՝ սահմանված կարգով ապահովել մրցույթի անցկացման մասին հայտարարության հրապարակումը և նախապատրաստական աշխատանքների իրականացումը :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. մարտի
ք.Եղեգնաձոր

Հավելված
Եղեգնաձորի համայնքի ղեկավարի
20.03.2020 թվականի թիվ 96 որոշման

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգնաձորի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ՝ Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար**

**1. ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետ /հաշվապահ/ / ծածկագիր 3.1-4 /**

Բաժնի առաջատար մասնագետը՝

ա) ապահովում է հաշվապահական հաշվառման կազմակերպումը և իրականացնում նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների ճիշտ արտացոլումը հաշվետվություններում, ամփոփում է եռամսյակային և տարեկան ֆինանսական հաշվարկները և հաշվեկշիռները .

բ) կազմակերպում է ապրանքանյութական արժեքների,. դրամական միջոցների և հաշվարկների ստույգ գույքագրումը, ինչպես նաև կրեդիտորական պարտքերի ժամանակին վճարումը .

գ) հաշվարկում և ժամանակին ապահովում է պետական բյուջեի, հարկային, սոցիալական ապահովման մուծումները, աշխատողների աշխատավարձը և մատակարարների պարտքերի վճարումը .

դ) կատարում է բաժնի պետի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.
ե) ապահովում է բաժնի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը.
զ) հետևում է բաժնի պետի հանձնարարականների, համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է բաժնի պետին.
է)իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.
ը) իրականացնում է քաղաքացիների հերթագրում՝ բաժնի պետի մոտ ընդունելության համար.
թ) բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.
ժ) բաժնի պետի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում պատասխան.
ի) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Բաժնի առաջատար մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

**Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝**

ա) ունի առնվազն միջնակարգ կրթություն.
բ) ունի ՀՀ Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին» , «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Գանձապետական համակարգի մասին», «ՀՀ բյուջետային համակարգի մասին», «Հաշվապահական հաշվառման մասին», «Դրամարկղային գործառնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն , ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն :
գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.
դ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթը կանցկացվի 2020թ. ապրիլի 22-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի համայնքապետարանի շենքում՝ ք.Եղեգնաձոր, Շահումյան 1:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք /այսուհետ՝ քաղաքացիներ/:
Դիմող քաղաքացիները Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝
ա/ դիմում մրցութային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/,
բ/ տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի դիպլոմի/ների/, վկայականի/ների/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
գ/ արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
դ/ մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,
ե/ անձնագրի պատճենը:
Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:
Քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:
Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9.00-ից մինչև 17.00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 08 ապրիլի 2020թ.՝ մինչև ժամը 17:00-ն:
Մրցույթներին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմ /ք.Եղեգնաձոր, , Շահումյան 1 հեռախոս՝ (0281)22020 / և ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն, հեռախոս՝ (0281)23061:

Եղեգնաձորի համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղար Ա. Սարգսյան